ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

« 21» «07» 2015թ.

ՈՐՈՇՈՒՄ

21.07.2015 թվականի թիվ 9

2015թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Թույլատրել 2015թ-ի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի ծախսային մասում (11-01-02-51) 4891 հոդվածից՝ 563.780 (հինգ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր ութսուն) դրամից պակասեցնել 268.518 (երկու հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր տասնութ) դրամ, ավելացնել՝

*1.*Կառավարման մարմնի պահպանման ծրագրի (01-01-01-51) գործառնական դասակարգման 4111 հոդվածին 75,012 (յոթանասունհինգ հազար տասներկու) դրամ:

*2.*Նախադպրոցական ուսուցում ծրագրի (09-01-01-51) գործառնական դասակարգման 4239 հոդվածին 156,0 (մեկ հարյուր հիսունվեց հազար) դրամ:

*3.*Աղբահանություն և սանմաքրման ծրագրի (05-01-01-51) գործառնական դասակարգման 4213 հոդվածին 37,506 (երեսունյոթ հազար հինգ հարյուր վեց) դրամ:

Քվեարկության

	Կողմ	դեմ	ձեռնպահ
Ս. Սիմոնյան			
Ա. Ալեքսանյան			
Գ. Ներսիսյան			
Ռ.Մկրտչյան			

Համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան